



## Ս. ԳԵՈՐԳ ԶՕՐԱՎԱՐ

Ս. Գեորգ Զօրավար ծնած է Կեսարացի քրիստոնեայ ընտանիքի մը մէջ: Ան չափաքան դառնալով կը զինուորագրուի հռոմեական բանակին եւ կարճ ժամանակ մը ետք կը ստանձնէ զօրավարի պաշտօնը ու 303 թուականին կը դառնայ Դիոկղետիանոս կայսեր խորհրդականը:

Երբ Դիոկղետիանոս կայսր քրիստոնեաներուն դէմ հալածանքի հրովարտակը պիտի հրապարակէր, նախ խորհուրդը կը հարցնէ իր զօրավարներուն, որոնցմէ էր նաեւ Գեորգ Զօրավար, որ հաւատացեալ քրիստոնեայ մը ըլլալով՝ դէմ կը կենայ կայսրին եւ կը փորձէ համոզել զայն, որ այդպիսի հրովարտակով մը չխանգարէ կայսրութեան քաղաքացիներուն անդորրը: Սակայն կայսրն ու զօրավարները կը հասկնան, թէ Գեորգ Զօրավար քրիստոնեայ է եւ կը փորձէ դարձի բերել զիրենք: Ուստի՝ բազմաթիւ չարչարանքներու կ'ենթարկեն զինք, որոնց մեծ քաջութեամբ կը դիմանայ:


Ի վերջոյ, Գեորգ կը յայտնէ կայսեր, թէ կը փափաքի կուռքերը տեսնել: Կայսրը խանդավառ այս խնդրանքէն, զայն կը տանի մեհեան մը կը տանի, այն ակնկալութեամբ որ Գեորգ պիտի երկրպագէ կուռքերուն: Սակայն Գեորգ ջարդ ու փշուր կ'ընէ զանոնք:

Կայսրը այս տեսնելով, անմիջապէս գլխատել կու տայ քաջ զօրավարը...:




ԹԻՒԵ ՊԱՏՐԱՍՏԵՅ՝ ՄԱՐՄՈՒՆ ԼՇՈՒՅԻՆ, ՇԱՀՐԵՆԻ,  
ՆԿԱՐԱԶԱՐՈՒՅ՝ ՈՒՅՅԻ ԲԵՇՈՒՇԵՆՆ





Գունաւորէ՛:


- Թիւ 12 պատասխանը կրող բաժինը՝ ԿԱՊՈՅՏ
- Թիւ 13 պատասխանը կրող բաժինը՝ ՍՐՃԱԳՈՅՆ
- Թիւ 14 պատասխանը կրող բաժինը՝ ՆԱՐՆՋԱԳՈՅՆ
- Թիւ 15 պատասխանը կրող բաժինը՝ ԿԱՐՄԻՐ
- Թիւ 16 պատասխանը կրող բաժինը՝ ԴԵՂԻՆ
- Թիւ 17 պատասխանը կրող բաժինը՝ ԿԱՆԱԶ



Կրնա՞ս լուծել: Բազմապատկութեան նշանը օգտագործելով, բոլոր թիւերը բառապատկէ՛ եւ իւրաքանչիւր թիւին քով պատասխանները արձանագրէ՛:



Բերքահաւաքը հաշուէ՛ եւ ճիշդ ճամբան գտի՛ր:



Թիւերը միացո՛ւր, ապա կազմուած պատկերը ներկէ՛:

# ՏՈՐՔ ԱՆԳԵՂ

Բարձրահասակ, կոպիտ կազմուածքով, տափակ քիթով, դուրս ցցուած կզակով, սեւ մութ յօնքերով, դաժան հայեացքով տգեղ հսկայ մըն էր Տորք, որուն պատճառաւ ալ զինք ԱՆԳԵՂ կը կոչէին:

Հակառակ իր տգեղութեան՝ Տորք Անգեղ համակրելի հսկայ մըն էր: Մանաւանդ երբ լեռներուն ստորոտը կենար, ուսին՝ արծիւ, ինք՝ արծիւ, իսկ լեռները՝ արծուաբոյն:

Տորք տարօրինակ որսորդ մըն էր: Ան առիւծ, գայլ ու միւս վայրի կենդանիները չէր սպաներ, այլ պարզապէս կը հնազանդեցներ իրեն:

Ան բարի էր եւ հանդարտ: Դիրին-դիրին չէր բարկանար: Սակայն վա՛յ որ բարկանար...

Օր մը Տորքին լուր կը հասնի, որ Սեւ ծովուն կողմէն աւազակներ եկած են եւ ժողովուրդին նեղութիւն կու տան: Տորք Անգեղ լեռները կտրելով հովու պէս սուրաց եւ օգնութեան հասաւ: Երբ յելուզակները լսեցին որ Տորք Անգեղ կու գայ, նստան իրենց նաւերը եւ փախան: Տորք հասաւ եւ տեսաւ որ կարելի պիտի չ'ըլլայ զանոնք բռնել, հետեւաբար բլուրի չափ ժայռեր վերցուց եւ նետեց նաւերուն ուղղութեամբ: Ժայռերը այնքան շատ ու խոշոր էին, որ Սեւ ծովուն վրայ ալեկոծում յառաջացաւ, նաւերը ալիքներուն տակ մնացին եւ խորտակուեցան:

Օր մը երբ Տորք իր սիրած անտառներուն մէջ կը հանգչէր, Հայաստանի մեծագոր Վաղարշակ թագաւորին սուրհանդակները մօտեցան իրեն եւ ըսին.

- Տո՛րք, Վաղարշակ թագաւոր լսեց քու մասիդ: Չնահատեց մանաւանդ յելուզակներուն տուած պատիժդ: Ան կը փափաքի, որ իր հիւրը ըլլաս:

Տորք հնազանդ զինուորի մը պէս աճապարեց ներկայանալ թագաւորին: Ու որպէսզի Հայոց թագաւորին ցոյց տար թէ Հայաստան ի՛նչ հսկաներ ունի, Տորք արմատախիլ ըրաւ խոշոր ծառ մը եւ ճամբայ ելաւ: Ան որքան կը մօտենար Վաղարշակ թագաւորի պալատին, այնքան ճամբուն երկու կողմերը ժողովուրդը կը բազմանար: Բոլորը հիացումով կը դիտէին զայն:

Վաղարշակ թագաւոր երբ տեսաւ հսկան ուղղակի ապշած մնաց: Ան բացագանչեց.

- Անհաւատալի է, դուն պարզ մարդ չես, այլ՝ ամբողջ բանակ մը:

Տորք խոնարհեցաւ համեստօրէն: Թագաւորը իր հետ խօսելով նկատեց, որ ան ոչ միայն ուժեղ էր, քաջ եւ համեստ, այլեւ՝ խելացի:

Օր մը Տորք մարմարի յարմար կտոր մը գտաւ եւ սկսաւ անոր վրայ Վաղարշակ թագաւորին նկարը քանդակել: Եղունգները մուրճի տեղ կը գործածէր: Որքան կ'աշխատէր, այնքան Վաղարշակ թագաւորին քանդակը կը յստականար: Թագաւորն ու թագուհին սքանչացումով կը հետեւէին անոր աշխատանքին: Ու երբ քանդակը աւարտեցաւ, բոլորը միաբերան ըսին.

- Բայց ասիկայ ճիշդ մեր թագաւորին պատկերն է: Այսքան ճարտար մատեն՞ր...

Հայաստանի մէջ ուրիշ հսկաներ ալ կային: Տորք սիրահարուած էր այդ հսկաներէն մէկուն սիրուն աղջկան՝ Հայկանուշին:

Վաղարշակ թագաւոր զանոնք ամուսնացուց եւ եօթ օր, եօթ զիշեր խնճոյք սարքեց:

Պնդողներ կան, որ Անգեղ անուն աստուած մը ունէինք, որուն տուրքն է այս հսկան՝ Հայաստանին: Ատկէ ալ անոր անունը՝ Տուրք Անգեղայ:





# ԱՐԵՉԱԿՆԱՅԻՆ ԴՐՈՒԹԻՒՆ



Արեգակնային դրուժեան մէջ կը գտնուին ութ մոլորակներ, որոնք արեւուն շուրջ կը դառնան:  
Արեւը՝ խոշոր, տաք կազային աստղ մըն է, որ լոյս եւ ջերմութիւն կ'արձակէ:

- \* Փայլածուն՝ արեւուն ամենէն մօտիկ մոլորակն է, իսկ ամենէն հեռուն կը համարուի Նիպտունը:
- \* Ամենէն մեծ մոլորակը՝ Լուսնթագն է, իսկ ամենէն փոքրը՝ Փայլածուն:
- \* Երկիր մոլորակը միակն է, որուն վրայ արարածներ կ'ապրին:
- \* Երկիրը ինքն իր շուրջ կը դառնայ 24 ժամուան ընթացքին, որ կը կազմէ 1 օր: Իսկ արեւուն շուրջ կը դառնայ 365 օրերու ընթացքին, որ կը կազմէ մէկ տարի:
- \* Արեգակնային դրուժեան մէջ արբանեակները մոլորակներուն շուրջ կը դառնան: Օրինակ՝ Լուսինը Երկիր մոլորակին շուրջ կը դառնայ: